ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 03.06.2016թ. թիվ 173-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 4.1 կետի պահանջներով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պատասխանատուի ընտրության կապակցությամբ փաստաբանների ժողով (քաղաքի փաստաբանների համատեղ հավաք) հրավիրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***2016 թվականի հուլիսի 9-ին*** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պատասխանատուի ընտրության համար անցկացնել Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի փաստաբանների ժողով (**այսուհետ՝ ժողով**):

2. Սահմանել, որ՝

2.1. ***թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2016 թվականի հունիսի 15-ից (սույն որոշման հրապարակման օրվանից) և ավարտվում է 2016 թվականի հունիսի 23-ին ժամը 18.00-ին.***

2.2. ***թեկնածուների համակարգչային հմտությունների ստուգման և գրանցման աշխատանքները կատարվում են մինչև 2016 թվականի հունիսի 28-ը (ներառյալ).***

2.3. ***քարոզչությունը սկսվում է 2016 թվականի հուլիսի 1-ից և ավարտվում է 2016 թվականի հուլիսի 7-ին.***

2.4. ***2016 թվականի հուլիսի 8-ը համարվում է լռության օր.***

2.5. ***ժողովի քվեարկությունը սկսվում է 2016 թվականի հուլիսի 9-ին ժամը 11:00-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17:00-ին:***

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

15 հունիսի 2016թ.
թիվ 196-Լ

- իրազեկել Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի փաստաբաններին Պալատի ցուցակում գրանցված էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու և Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան փողոց 2, 4-րդ հարկ) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա հայտարարությունը փակցնելու միջոցով:
- սույն որոշման մասին իրազեկել մարզային խնդիրների համակարգման գծով Պալատի նախագահի տեղակալին.
- մարզային հաշվիչ հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

4. Հաստատել Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի փաստաբանների համատեղ հավաքի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

15 հունիսի 2016թ.
թիվ 196-Լ
ք. Երևան

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
15.06.2016թ. թիվ 196-Լ որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պատասխանատուի ընտրության համար փաստաբանների ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքիյան 2 15.06.2016թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2016 թվականի հուլիսի 9-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) դահլիճում (հասցեն՝ ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, մեծ դահլիճ) Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պատասխանատուի ընտրության կապակցությամբ հրավիրվելու է Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի փաստաբանների ժողով (քաղաքի փաստաբանների համատեղ հավաք, այսուհետ՝ ժողով):

1. Քվեարկությունը սկսվում է **2016 թվականի հուլիսի 9-ին, ժամը 11:00-ին և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17:00-ին:**
2. Քաղաքի պատասխանատուի **թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2016 թվականի հունիսի 15-ից և ավարտվում է 2016 թվականի հունիսի 23-ին, ժամը 18:00-ին:**
3. Քարոզչությունը սկսվում է **2016 թվականի հուլիսի 1-ից (ներառյալ) և ավարտվում է 2016 թվականի հուլիսի 7-ին:**
4. Յուրաքանչյուր մարզի քաղաքի փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
6. Քվեարկության գաղտնիությունը ընտրող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:

Ինքնաառաջադրման վերաբերյալ դիմումը (**«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի** 5.5 կետում նշված բովանդակությամբ) պետք է ներկայացվի ք.Երևան, Զաքիյան 2 հասցեով՝ մարզային հաշվիչ հանձնաժողովին:

«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգը և անհրաժեշտ այլ տեղեկությունները կարող եք ներբեռնել Պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար